



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

4 օգոստոսի 2011թ. թիվ 394

**Ն.ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԱՐԶԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 159 հոդվածների, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. դեկտեմբերի 16-ի թիվ 1652-Ն որոշումը և հաշվի առնելով Ն.Առաքելյանի դիմումը՝

Կարգադրում եմ.

1. «Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նաիրա Առաքելյանին տրամադրել 2011 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը ս/թ օգոստոսի 4-ից մինչև օգոստոսի 30-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր:

2. Ն.Առաքելյանի արձակուրդում գտնվելու ժամանակ փոխարինող նշանակել «Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտաշխատող Արմինե Ավդայանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2011թ. օգոստոսի 4  
ք.Վանաձոր